

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Նորություն չի լինի ասել, որ հսկա խորհրդային պետությունը փլուզվեց հիմնականում ազգային հիմնախնդիրների կոնկրետ լուծումները չունենալու պատճառով, որովհետև ազգային հարց լուծել՝ նշանակում է հետևողականորեն պահպանել մարդու իրավունքները, հանդես գալ տվյալ պետության բոլոր քաղաքացիների իրավահավասարության օգտին՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից: Այս խնդիրների կարգավորումից էր կախված խորհրդային Ռուսաստանի նման բազմազգ պետությանը թե միասնականության պահպանման խնդիրը, թե ազգային անվտանգությունից ելնելով, քաղաքական այլընտրանքների ձևավորման նոր հնարավորություններ ստեղծելը, հատկապես որ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առաջ եկավ ոչ պակաս կարևոր և լուրջ խնդիր՝ կապված ռուսալեզու մոտ 25մլն ազգաբնակչության հետ, որոնք անկախ իրենց կամքից հայտնվեցին իրենց պատմական հայրենիքից դուրս: Սրանք այն մի քանի առանցքային հիմնահարցերն են, որոնց ազգային անվտանգության հայեցակարգի վերագնահատումից ելնելով, իրենց ծրագրային փաստաթղթերում անդրադարձել են Ռուսաստանի Դաշնության գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունները: Ելնելով իրենց քաղաքական, գաղափարական ուղղվածությունից, նրանք տարբեր չափի տեղ են հատկացրել այս հարցին իրենց ծրագրերում, որոշները փորձ են արել նույնիսկ հարցի լուծման բանաձև մշակել:

Խորհրդային կայսրությունում ժողովուրդների հետաքրքրությունների բացարձակ անտեսումը կարող էր բերել նրան, որ խորհրդային իշխանությունը կարող էր դառնալ քաղաքական կայունության համար նույնքան վտանգավոր, որքան ռուսական նացիոնալիզմը: Հնարավորություն ստեղծվեց օգտագործել ռուսական նացիոնալիզմի կայսերական ձևը:

Ռուսական նացիոնալիզմը իշխանությունը կիրառում էր սեփական քաղաքական գաղափարների տարածման նպատակով: Նրա գործունեության սահմանները օբյեկտիվորեն սահմանափակվում էին խորհրդային կոմունիստական ռեժիմի հիմնական սկզբունքներով: Խորհրդային քաղաքական էլիտայի առավելապես ռուսական կազմը փոքր նշանակություն ուներ, քանի որ իր ինքնագիտակցության մեջ այն ավելի շատ խորհրդային էր, քան նացիոնալ:

Վերջինս հատուկ տեղ էր զբաղեցնում 1960-70-ական թվականների խորհրդային քարոզչությունում:

«Չեղափոխության» սկիզբը չբերեց ռուս նացիոնալիստների վիճակի էական փոփոխության: Ինչպես նրա կազմակերպական ձևերը, այնպես էլ նրա գործունեության ոլորտը նույնը մնացին, դրանք տարանջատված խմբակներ և ակումբներ էին, որոնք մասնակցում էին մշակութա-լուսավորական աշխատանքներին: Սակայն աստիճանաբար գլուխ էր բարձրացնում քաղաքական միասնությունը, որն արթնացնում էր խորհրդային հասարակությանը խոր քննից: Չամենայն դեպս նրանցից որոշներն իսկապես բավարարում էին ռուս նացիոնալիստների պահանջները և թույլ էին տալիս կարծել, նրանց ամենացանկալի երազանքն իրականանում է՝ ԽՍՀՄ-ում իշխանության գլուխ են բարձրանում նացիոնալ կողմնորոշում ունեցող ուժերը:

Գորբաչովյան «գարնանից» սկսած երկրում սկսեցին հայտնվել քաղաքական ինքնագործունեության հետքեր: Ռուս նացիոնալիստները բավականին մեծ գործունեություն ծավալեցին՝ շնորհիվ իրենց տարատեսակ խմբերի և այս կամ այն ոլորտում իրականացրած լայնածավալ գործունեության: 1985-1987 թթ թուռն կերպով քաղաքականացվեց «Ռամբո»-ը, որը ղեկավարում էր Դմիտրի Վասիլևը: Լինելով պաշտոնապես մշակութա-լուսավորական ակումբ, այն հեշտությամբ առաջ էր քաշում իր քաղաքական պահանջները, ընդ որում նրա քարոզչությունը լի էր աճող «հակասոցիալիստական» մոտեցումներով և ավելի ու ավելի ազատ բնույթ էր կրում: Չմայած այդ կազմակերպության կողմնակիցների շրջանակը սահմանափակ էր, հենց անվանումը «Ռամբո» հաստատոտեն նույնացվում էր ռուսական նացիոնալիզմի հետ, նման անվանմամբ խմբեր էին ձևավորվում նաև Ռուսաստանի այլ շրջաններում:

Իրականում «Ռամբո»-ը լայն ճանաչում գտավ Մոսկվայում 1987թ. մայիսի 6-ի ռանդահավաքից հետո, որը կարելի է համարել «հեղաշրջման» շրջանի առաջին զանգվածային քաղաքական ակցիան: Չանրահավաքի մասնակիցների հետ հանդիպեց այն ժամանակվա ԽՍՀՄ-ի մոսկովյան քաղաքային կազմակերպության ղեկավար Բորիս Ելցինը, իսկ «Ռամբո»-ը դարձավ քաղաքական բյուրոյի քննարկումների առարկա:

Ռուսական նացիոնալիզմի ելույթներին իշխանությունները բավականին բուռն կերպով առձագանքեցին, թերթերի էջերում լույս տեսան հոդվածներ, որոնցում խոսվում էր «ռեակցիոն մանրբուրժուական նացիոնալիզմի» վերածննդի վտանգի մասին Եվ չնայած «Ռամբո»-ի և այլ ռուս նացիոնալիստական խմբերի կարգախոսներում և պահանջներում շատ ընդհանուր բաներ կային (Աֆղանստանում աատերազմի դադարեցման, բյուրոկրատիզմի դեմ աաջաբոր ուժեղացման և այլ նման պահանջներ), սակայն զանգվածային լրատվամիջոցները ուշադրությունը սևեռվում էր առաջին հերթին «հակա-սոցիալիստական» և «ամամասստանական» գաղափարների վրա:

Քարոզչական հարվածը հասել էր ոչ միայն «Намято»-ին: Քննդատության կրակի տակ հայտնվեցին գործնականում քաղաքականորեն կողմնորոշված ողջ զանգվածը, ինչպես նաև մի շարք թերթեր և ամսագրեր:

1980-ական թվականների վերջերին սլավոնամետների և արևմտամետների միջև գոյություն ունեցած վաղեմի վեճը կրկին վերածնվեց, վեճն այն մասին, թե ուր՝ պետք է շարժվի Ռուսաստանը: Այս անգամ «հայրենասեր-ռեակցիոներներին» դեմ էին «պրոգրեսիվ դեմոկրատ-արևմտամետները»: Այդ քարոզչական գործունեության արդյունքը եղավ այն, որ ռուս նացիոնալիստների մասին բացասական կերպար /իմիջ/ էր ձևավորվել:

Ռուսական նացիոնալիզմը, որը կայուն ասոցիացիաներ էր առաջացնում ագրեսիվության և դաժանության հետ, հասարակության աչքում կշիռ չուներ: Դրան զուգահեռ առաջ եկան տվյալ ուղղության նաև մի շարք այլ բացասական հետևանքներ:

Ոչ միայն նացիոնալիզմ, այլ նաև «հայրենասիրություն» հասկացությունը խստորեն հակադրվում էր դեմոկրատիային և ազատությանը: Այս երկու հասկացությունները և արժեքները առանձնացված էին հատուկ նպատակով, ինչը չէր առանձնացվում Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրներում և ոչ էլ նախկին խորհրդային հանրապետություններում: Այդ երկրներում նացիոնալիզմը և դեմոկրատիան կազմում էին միևնույն քաղաքական շարժման հիմքը:

Ռուսական նացիոնալիստների դեմ քաղաքական բնույթի քննարկումները նրանց ներգրավում էին քաղաքական դաշտ և նպաստում ռուսական նացիոնալիզմի քաղաքականացմանը:

Ռուսական նացիոնալիզմի կանխիչ հարվածը կանխարգելեց, սակայն չդադարեցրեց նրա զարգացումը: 1980-ական թվականների վերջերին նկատվում էր նրա էական աշխուժացում, ինչը նախ և առաջ արտահայտվում էր ռուս-նացիոնալիստական կազմակերպությունների թվի աճով, նրա աշխարհագրական լայնացմամբ և գործունեության դաշտի մեծացմամբ: Ուղղակի քաղաքական կազմակերպություններին զուգընթաց առաջացան նաև նացիոնալիստական կողմնորոշում ունեցող մի շարք մշակութա-լուսավորական, հոգևոր-կրոնական, էկոլոգիական խմբեր և ակումբներ: Քաղաքականացված միջավայրում ակտիվորեն գնում էր գաղափարա-քաղաքական զարգացման, այսինքն նախկին ամորֆ նացիոնալիզմից սկսեցին ձևավորվել նոր, ավելի թարմ և գրավիչ գաղափարներ:

Այդ ժամանակ ռուսական նացիոնալիզմի գաղափարական տեսադաշտում ձևավորվում է այնպիսի բավականին էկզոտիկ ուղղություն, ինչպիսին է ուղղափառ միապետությունը, որը գտնում էր, որ միայն միապետության միջոցով կարելի է պահպանել Ռուսաստանի միասնականությունը:

Միապետականներին զուգընթաց գոյություն ունեին նաև կազմակերպություններ, որոնք գտնոււմ էին, որ համրապետությունը Ռուսաստանի համար ամենահարմար քաղաքական կարգն է: Ռուս նացիոնալիստների ճնշող մեծամասնությունը բացասաբար էր վերաբերվում բաց հասարկության արժեքներին և հանդես էր գալիս ուժեղ ավտորիտար իշխանության ձևավորման գաղափարներով, սակայն նրանցից ոչ բոլորն էին համամիտ կայսրությունը ամեն զնով պահպանելու մտքի հետ:

Նացիոնալիստները համամիտ էին ռուս ժողովրդին «եռամիասնություն» համարելու գաղափարի հետ, քանի որ նրանք ենթադրում էին, որ «ռուսականության» մեջ մտնում են երեք տեսակի ժողովուրդներ: Որոշները, Ֆյոդոր Դստոևսկուն հետևելով, պնդում էին, որ ռուսականության զխավոր հատկանիշը ուղղափառությանը պատկանելն է, սակայն իրականում ուղղափառությունը նեղացնում էր էթնիկական սահմանները, համարելով այն «ռուսական կրոն»: Մյուսները ռուսականությունը բավականին լայնորեն էին մեկնաբանում, որպես չափանիշ ընդունելով ռուսերենը մայրենի լեզու ընդունելը, ռուսական մշակույթի և սովորույթների մեջ ընդգրկված լինելը, սերը Ռուսաստանի սնատմամբ և այլ չափանիշներ: Այսպիսով, եթե առաջին դեպքում խոսքը զնում էր էթնոկրոնական բացատրության մասին, ապա երկրորդ դեպքում հենվում էին հիմնականում մշակութա-հոգեբանական և մշակութա-պատմական գործոնների վրա: Դրա հետ մեկտեղ ռուսական նացիոնալիզմում ի սկզբանե գոյություն ուներ միտում՝ ռուսականությունը առաջին հերթին զնահատել արյամբ, ինչը չէր կարող չբերել ռասիզմի:

Զնայած բոլոր գաղափարական տարբերություններին՝ ռուս նացիոնալիստական կազմակերպությունների մեծ մասին բնութագրական էին մի շարք ընդհանուր գծեր: Նախ և առաջ դա իշխանության ավտորիտար տեսակի, պետության և այնպիսի ինստիտուտների, ինչպիսիք են բանակը և պետանվտանգությունը, բառացի աստվածացման անվիճելի ձգտումն էր: Ռուս նացիոնալիստների համար «Արևմուտքը» ոչ միայն աշխարհագրական կամ աշխարհաքաղաքական հասկացություն էր, այլ տեղ, որտեղ կենտրոնանում էր ռուսական քաղաքակրթության համար վտանգավոր և խորթ ամեն ինչ:

Տնտեսության բնագավառում նացիոնալիստների ծրագրերը մշակված չէին և բավականին հրապարակախոսական էին, առաջին պլան էր մղվում «երրորդ ուղու» գաղափարը, որը այլընտրանքային էր և խորհրդային սոցիալիզմին և արևմտյան կապիտալիզմին: Ավելի ճշգրիտ այն ենթադրում էր խառը տնտեսություն պետական սեկտորի և կարևորագույն արդյունաբերական ու արտաքին առևտրի պետական մոնոպոլիայի առաջատար դերի պայմաններ:

Ռուսական նացիոնալիզմի ծրագրերում կարևորագույն տեղ էին հատկացվում մի շարք այն հարցերին, որոնք կապված էին ռուսական ազգային

մշակույթի զարգացման և ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարման հետ: Երկրի քաղաքացիները պահանջում են հատուկ քաղաքականություն իրականացնել Ռուսաստանում բնակվող այլ ժողովուրդների նկատմամբ և՛ սահմանափակել նրանց իրավունքները և ազգային խտրականության միջոցառումներ ձեռնարկել:

1980-ական թվականների ռուսական նացիոնալիզմի անկյունաքարն էր համդիսանում Ռուսաստանի լիիրավ սուվերենությունը, նրա լիիրավությունը ԽՍՀՄ միութենական այլ պետությունների հետ: Նացիոնալիստները պահանջում էին այնպիսի ինստիտուտների ստեղծում, ինչպիսիք էին զանգվածային տեղեկատվության ռուսական միջոցներ, գիտությունների ռուսական ակադեմիա, և նույնիսկ ռուսական կոմկուս: Նրանք համարում էին, որ այս բոլոր պահանջների կատարումը կհանգեցներ ռուս ժողովրդի վերածնունդին՝ չհասկանալով կամ չցանկանալով գիտակցել, որ ռուսական սուվերենիտետի իրականացումը հզոր ազդակ կհանդիսանա ԽՍՀՄ-ի փլուզման համար:

1980-ական թվականների վերջերին ռուսական նացիոնալիզմի գաղափարախոսությունն ընդհանուր առմամբ կարելի է որակել որպես աջակողմյան կոնսերվատիվ գաղափարախոսություն, իսկ 1990-ական թվականներին սկսեց ուժեղանալ աջ-ռադիկալ միտումը:

1980-ական թվականների Ռուսաստանում ծավալված քաղաքական ինքնորոշման պայքարում իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան նաև նացիոնալիստները: Չնայած կոմունիստների նկատմամբ բացասական տրամադրվածությանը նացիոնալիստները, այնուամենայնիվ որոշեցին միավորվել նրանց հետ ընդդեմ դեմոկրատների: Պատճառները ակնհայտ էին. մի կողմից նացիոնալիստները գտնում էին, որ կոմունիստները ավելի քիչ չարիք կարող էին բերել Ռուսաստանին, քան դեմոկրատները, իսկ մյուս կողմից էլ նրանք հույս ունեին կոմունիստների միջոցով ռուսականացնել իշխանությունը և վերջնական հաղթանակ տանել կոմկուսի շարքերում: Պաշտպանելով կոմունիստական ռեժիմը՝ նացիոնալիստները հույս ունեին ստանալ իշխանության կրտսեր գործընկերոջ կարգավիճակ:

Նացիոնալիստներից որոշները որոշեցին պայքարել երկու ճակատներում, և կոմունիստների, և դեմոկրատների դեմ: Սակայն կային նաև այնպիսի նացիոնալիստներ, որոնք մտան դեմոկրատիայի շարքերը և փորձեցին նրանց շարքերում սերմանել նացիոնալիստական տարրեր, միավորել նացիոնալ և դեմոկրատական արժեքները: Պետք է նշել, որ նման միությունը ստեղծված պայմաններում հնարավոր էր:

1980-ական թվականների վերջերից քաղաքական պրոցեսի հիմնական գծերից մեկը դարձավ Ռուսաստանի Ղաշնության առաջատարության պայքարը, ինչը հանդիսացավ խորհրդային Միության ապախնտեզրացման,

դաշնային կենտրոնի թուլացման և միութենական պետությունների ինքուրույն կենտրոնական ուժերի ձևավորման անխուսափելի հետևանք: Քաղաքական դրամայի հիմնական մասանկիցներ դարձան պայմանականորեն ասված կոմունիստները և դեմոկրատները, մինչև նացիոնալիստները, այդ ժամանակ լինելով թույլ քաղաքական ուժ, չէին կարող ինքուրույն հանդես գալ:

Թուլացած ԽՄԿԿ-ն, նրա փաստացի հեռացումը պետական կառավարման լծակներից, խորհրդարանական ձևի անցման փորձերը բերեցին քաղաքական պայքարի էպիկենտրոնի տեղափոխմանը խորհրդարան: ՌԽՖՍՂ-ի ժողովրդական պատգամավորների հաղթանակը ընտրությունների ժամանակ, որոնք պետք է կայանային 1990թ. գարնանը, հեռանկարում նշանակում էր պետության իշխանական, տարածքային և ռեսուրսային կառուցվածքների վերահսկողություն: Դեմոկրատների հաղթանակը Ռուսաստանում մեխանիկորեն զրկում էր միութենական կառավարությանը սեփական ռեսուրսային և քաղաքական հիմքից՝ թողնելով նրան միայն Կրեմլը:

1990թ. ընտրական գործընթացների ժամանակ Ռուսաստանում առաջին անգամ մշակեվեց ռուս նացիոնալիստների և նեոկոմունիստների կազմակերպված փոխազդեցության կարգը: 1989թ. վերջերին Ռուսաստանում ձևավորվել էր դեմոկրատական շարժմանը ընդդիմադիր հասարակական-հայերնակցական շարժման բլոկը՝ նացիոնալիստական, նացիոնալ-բոլշևիկյան և նեոբոլշևիկյան կազմավորումների կոալիցիա, որտեղ հիմնական դերը կատարում էին նացիոնալ-բոլշևիկները ի դեմս Աշխատավորների միավորված միության:

Բլոկի ծրագիրը հիմնվում էր երկու հիմնական սկզբունքների վրա՝ միասնական խորհրդային Միության պահպանում և Ռուսաստանի պետական սուվերենիտետի ողջ ծավալով իրականացում, միութենական պետությունների հետ հավասար տնտեսական իրավունքների ապահովում:

Նացիոնալ-կոմունիստական միավորման ստեղծման գործում իրենց ներդրումն ունեցան նաև մոսկովյան կոմսոմոլները և պաշտոնական արհմիությունները: Քանի որ խոշոր մեզապոլիսներում հիմնականում իշխում էին ժողովրդավարական տրամադրվածությունները, ապա ընտրական գործընթացում կոմունիստական թեկնածուների հաղթանակի հնարավորությունները բավականին փոքր էին, այդ իսկ պատճառով կոմունիստ ղեկավարները որոշեցին օգտվել ուրիշ գաղափարախոսությունից՝ հենվել նացիոնալիզմի վրա: Պետք է նշել, որ նացիոնալիստները և կոմունիստների մի մասը մոտ էին միմյանց իրենց պետական տրամադրվածությամբ և Գորբաչովյան քաղաքականության նկատմամբ ունեցած ընդգծված քննադատությամբ:

Սակայն նման միության ստեղծման առաջին փորձն անհաջողությամբ պսակվեց: Մոսկվայում և Լենինգրադում նացիոնալ-կոմունիստական բլոկը ջախջախիչ պարտություն կրեց իր հիմնական մրցակցի՝ «Դեմոկրատական

Ուսաստանի» կողմից: Հայրենակցական կալիցիայի դեմ դուրս եկան ՉԼՍ-ներն իրենց բացասական վերաբերմունքով: Սակայն գոյություն ունեին պարտության նաև բավականին լուրջ պատճառներ: Պետք է նշել, որ նացիոնալիստները որքանով էլ համամիտ լինեին կոմունիստական կուսակցության գաղափարախոսության հետ, այնուամենայնիվ, դեմ էին նրանց, ինչն էլ պառակտում էր առաջացնում նոր ձևավորված բլոկի ներսում:

Ընտրական գործընթացների ընթացքում դեմոկրատները նացիոնալիստներից վերցրեցին իրենց ռուսական սուվերենիտետի գաղափարը, այն դարձնելով իրենց քաղաքական կոչը: Այստեղ պետք է նշել, որ Բորիս Ելցինի քաղաքական կարիերան չէր կանխատեսում Ռուսաստանի նոր ճակատագրի կերտողին և նրա սուվերենիտետի համար պայքարողին: Նրա հայացքները մինչև 1989-90 թվականները կրում էին մաքուր պոպուլիստական բնույթ, չունեին որևէ նացիոնալ գիծ, նրանցում տեղ չունեի նաև ռուսական գործոնը: Դեմոկրատական շարժման հիմնական տրամադրվածությունը, որի հետ Ելցինը ամուր կերպով կապված էր 1989թ. ամառվանից սկսած, հանդիսանում էր ռուսականի, նացիոնալիստականի էքզիստենցիոնալ բացառումը:

Սակայն 1989թ. վերջերին քաղաքական իրականությունը Ելցինին ստիպեց հաշվի նստել նաև դեմոկրատների հետ: Ռուսական խորհրդարանական ընտրություններում հաջողություն ունենալու համար անհրաժեշտ էր հասկանալ ռուսական այսպես կոչված «սիրտը» և յուրացնել դեմոկրատների համար սկզբունքորեն նոր գաղափարական հայացքներ: 1990թ. հունվարին «Դեմոկրատական Ռուսաստանը» համընդհանուր դեմոկրատական պահանջների հետ մեկտեղ ներկայացնում էր նաև այնպիսի պահանջներ, որոնք հոգեհարազատ էին հասարակ ժողովրդին՝ հավատքի վերադարձումը հավա. տացյալներին, Ռուսաստանի սուվերենիտետի փաստացի իրականացումը և այլն:

Փոխառելով նշված լոզունգները մրցակից նացիոնալիստներից՝ դեմոկրատները դրանց նոր հնչեցրանգ հաղորդեցին. նրանք առավելագույնս մեղմեցին էթնիկական բաղադրիչը, շեշտը դնելով՝ ոչ թե «ռուսականի» այլ «ռուսաստանյանի» վրա: Պետք է նշել, որ այդ շեշտով նրանք ցանկանում էին իրենց կողմը գրավել նաև ռուսաստանաբնակ ոչ ռուս ազգաբնակչությանը: Չնայած մայրաքաղաքային ընտրություններում հաղթանակ տարան հիմնականում դեմոկրատները, այնուամենայնիվ ժողովրդական պատգամավորներն ընդհանուր առմամբ կազմված էին դեմոկրատների և նացիոնալիստական բլոկի հավասար ուժերից, վերջինում հիմնական դերը կատարում էին կոմունիստները: Երկար պայքարից հետո ՌԽՖՍՀ-ի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Բ. Ելցինը: 1990թ. հուլիսի 12-ին նա ընդունեց Հռչակագիր Ռուսաստանի ինքնորոշման մասին: Ռուսական ինքնորոշման կարգախոսը

դարձավ դեմոկրատների և Բ. Ելցինի համար այն գրավականը, որի օգնությամբ նրանք հետագայում քաղաքական իշխանության գլուխ անցան:

Ուս նացիոնալիստները հայտնվեցին փակուղում ռուսական ինքնորոշման մասին նրանց զաղափարախոսությունը հաջողությամբ յուրացրել էին մրցակից դեմոկրատները, նրանք կորցրել էին իրենց երբեմնի քաղաքական հաջողությունները: Ռուսական նացիոնալիստները միայն մեկ հնարավորություն ունեին՝ միանալ ավելի ուժեղ քաղաքական ուժին: Նացիոնալիստները իրենց հայացքը ուղղեցին 1990թ. ստեղծված Ռուսաստանի կոմկուսին, որը, ինչպես կարծում էին նացիոնալիստները, կձևավորվի «ռուսական կուսակցության», կպաշտպանի Ռուսաստանի նացիոնալ-պետական շահերը և կփրկի երկրի միասնությունը: Նման ենթադրությունը իր հիմնավորումն ուներ Ռուսական կոմունիստական կուսակցության քաղաքական հայացքներում:

ՈԿԿ-ն հենց սկզբից էլ իր ձեռքն առավ ռուսական նացիոնալիստների և կոմունիստների միության ձևավորման խնդիրը: Սակայն ի տարբերություն 1990թ. զարման կոալիցիայի միավորումը պետք է հանդես գար ոչ թե բոլշևիկյան կարծիքը նշանի ներքո, այլ սահմանափակ նացիոնալիստական և պետական կարգախոսի ներքո: Այլ խոսքերով ասած, խոսքը կայսրական նացիոնալիզմի մասին է:

1991թ. նախագահական ընտրություններին Բ. Ելցինը ստացավ ձայների ավելի քան 57%-ը, այն ժամանակ, երբ նրա հիմնական մրցակից կոմունիստական կուսակցության ղեկավար Ն. Ռիժովը ստացավ ձայների ընդամենը 17%-ը: Երրորդ տեղում էր գտնվում խորհրդային Միության Լիբերալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Վ. ժիրինովսկին:

Չանդես գալով կայսերական նացիոնալիզմի ծրագրով՝ Վ. ժիրինովսկին միակն էր վեց թեկնածուներից, ով ակտիվորեն օգտագործում էր ռուսական նացիոնալիստական կարգախոսը՝ ընդ որում բավական արմատական տեսքով, այդ իսկ պատճառով Վ. ժիրինովսկու հարաբերական հաջողությունը դարձավ ռուսական նացիոնալիզմի քաղաքական մեծ պոտենցիալի ինդիկատոր: Սակայն վերջինիս ներկայացուցիչների համար Վ. ժիրինովսկու հաղթանակը ոչինչ չէր նշանակում, նա մնում էր օտար, անընդունելի ոչ միայն որպես լիդեր, այլ նաև որպես կողմնակից: Նացիոնալիստներին վաճում էր Վ. ժիրինովսկու սկանդալային կերպարը, նրա «կասկածելի» ծագումը, ինչպես նաև նրա չթաքնված հավակնոտությունը:

Բ. Ելցինի հաղթանակը բերեց աջակողմյան բլոկի զաղափարների վերականգնմանը: Այսպիսով, չնայած խորհրդային շրջանի վերջին հնգամյակում ռուսական նացիոնալիզմը զարգանում էր որպես քաղաքական ուղղություն, սակայն այն մնում էր կազմակերպականորեն թույլ և քաժանված, իսկ զաղափարապես հնացած և քիչ գրավիչ: ԽՍՀՄ-ի փլուզման ժամանակ ռուսա-

կան նացիոնալիզմը այդպես էլ չդարձավ քաղաքական գործընթացի լիիրավ սուբյեկտ՝ մնալով երկրորդական կամ երրորդական դերում, լավագույն դեպքում հանդես գալով կոմունիստական խմբավորման շարքերում:

Այսպիսով, քաղաքական հարաբերությունները Ռուսաստանում բավականին շարժուն են, որի ամենակտիվ մասնակիցներն են նացիոնալիստները, կոմունիստները, սոցիալ-հեղափոխականները, արմատական-հեղափոխականները, այսինքն բնականորեն զարգանում է բազմակուսակցական համակարգը: Այստեղ պետք է համաձայնել քաղաքագետ Ս. Սարկովի հետ, ով պնդում է, որ "կուսակցություններին փոխարինող կարող են լինել ոչ թե համընդհանուր համաձայնությունը և կազմակերպվածությունը, այլ առանց կանոնների խիստ պայքարը": Այսպիսով, ժողովրդավարությունը առանց կուսակցությունների Ռուսաստանում գոյություն ունենալ չի կարող: Դրա հետ մեկտեղ ժամանակակից ռուսական կուսակցությունների գնահատականները բխում են արևմտյան եվրոպայի երկրների կուսակցական համակարգերի հետ ունեցած ոչ ակնհայտ համեմատությունից, սակայն Տ. Շմաչկովը գտնում է, որ տեղին չէ այդ համեմատությունը: Մի շարք երկրների կուսակցական համակարգերը ժողովրդավարության անցման շրջանում խիստ տարբերվել են Ռուսաստանի նույն շրջանից իրենց բույլ կազմակերպություններով, անկայուն ընդդիմադիր քաղաքականությամբ, որը չի կարելի ասել Ռուսաստանի մասին: Միայն այն, որ վերջին ընտրությունների քաղաքական գործընթացում ռուս նացիոնալիստները /Единая Россия/ կարողացան էական դեր ստանձնել և 60-65 տոկոս ընտրազանգված ունենալ, նշանակում է, որ բազմակուսակցական համակարգի զարգացումը նույնպես հանգամանորեն հենվում է նացիոնալիստների քաղաքական ուղղվածության վրա: Զի կարելի չհամաձայնել Գոլոսովի այն կարծիքի հետ, որ "էլեկտորալ բանաձևի" ներմուծումը, որի համաձայն ՌԴ-ի Պետական Դումայի ներքին պալատի առաջին կեսը /225 պատգամավոր/ ընտրվում են մեծամասնական համակարգով, իսկ մյուս կեսը /225 պատգամավոր/ համամասնական համակարգով, արագացուցչի դեր կատարեց կուսակցական հարաբերությունների կարգավորման և զարգացման գործում: Գելմանի այն պնդումը, թե ՌԴ Պետդումայի պատգամավորների ընտրությունների ներմուծված համակարգը քաղաքական անորոշության պայմաններում ձևավորված հարաբերությունների արդյունք է, վերջին երեք ընտրություններից հետո հիմնավորապես ժխտվեց: Խորհրդարանական ընտրական համակարգում արմատական փոփոխություններ այդպես էլ տեղի չունեցան, իսկ ազգայնականները ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը: Այնպես, որ նույնացնել "զարգացած արևմուտքի ժողովրդավարությունը" ռուսական իրականության հետ, ինչպես փորձում են անել Կինոգրադովը, Գոլովինը, տեղին չէ: Սիա ևս մի հիմնարար պատճառ, որ

պահանջում է ուսական կուսակցությունների ծրագրերում ազգային հարցի վերլուծման այլընտրանքային մոդել իր հիմնարար դրույթներով:

Գ Ր Վ Չ Ա Ն Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Էլեկտր Չելներ Ազգերը և ազգայնականությունը, Երևան, 2003:

Коргунов Ю. Заславский С. Современная российская многопартийность. М., 1996.

Власть и оппозиция. Российский политический процесс XX столетия/Под ред. В.

Журавлева. М. 1996.

Салмин А. Выборы и избирательные системы: опыт России в 1989-1993 годах // Sapere Aude. N2.

Тимошенко В., Заславский С. Российские партии, движения, блоки на выборах в Государственную Думу 17 декабря 1995г., проблемы, перспективы. М., 1996. Шейнис

В. Прошел ли исторический рубеж. // Полис. 199, N1.

Холодковский К. Политические партии России и выборы 1995-1996гг. // Мировая экономика и международные отношения. 1997. N2.

Верховский А., Михайловская Е., Прибыловский В. Политическая ксенофобия, М., Изд. ООО "Таноракс", 1999.

Маркс С. Формы существования политических партий в современной России // Формирование политической системы России / Под ред. А. Кортунова, М., 1996.

Шенкман Т. Теория коалиций и становление российской многопартийности // Полис, 1996, N5.

Голосов Г. Пределы электоральной инженерии: «смешанные несвязанные» избирательные системы в новых демократиях // Полис. 1997, N3.

Гейман В. Создавая правила игры, российское избирательное законодательство переходного периода // Полис, 1997.

Винogradov В., Головин Н. Политическая социология. СПб. 1997,

Россия и мусульманский мир, 2005-1(151) Бюллетень реферативно-аналитической информации Изд. Российская Академия Наук, Институт научной информации по общественным наукам Институт востоковедения, Москва, 2005.

Политические партии России: История и современность: РОССПЕН, Москва, 2000.

Политические партии, движения и организации современной России на рубеже веков. Изд. Михайлова В. А. Санкт-Петербург, 1999.